3. Սահմանագծության լրիվ մորիլիզացումից հետո կավը պետք է ցուցաբերի դիմադրության մեծ և արագ նվազում, որ քայլայման գոտում շարգելակի դիմադրենցիալ դեֆորմացիայի համար անհրաժեշտ շարժմանը և հետևաբար լարումների կենտրոնացման գոտու տեղաշարժմանը դեպի հարիւմ շխախտված կավի գոտին:  $S_0/S_r$  հարաբերությունը արտահայտում է դեֆորմացման հետևանքով կավի փափկեցման աստիճանը:

Առաջընթաց քայլայման դեպքում սահեցման անընդհատ մակերեսույթի զարգացումը հնարավոր է, եթե միայն բավարարվում են բոլոր երեք պայմանները, այսինքն՝ եթե այդ բոլոր երեք կարևոր հարաբերությունները գերազանցում են սահմանային արժեքներին:

**ԳԵՐԿՈՆՍՈԼԻԴԱՑՎԱԾ ՊԼԱՍՏԻԿ ԿԱՎԵՐԻ ԵՎ ԿԱՎԱՅԻՆ ԹԵՐԹԱՔԱՐԵՐԻ  
ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Գերկոնսոլիդացված կավերի և կավային թերթաքարերի հատկությունների մասին ուսցիունալ պատկերացում կազմելու համար, նամանավանդ այն հատկությունների, որոնք պայմանավորում են առաջընթաց քայլայման վտանգը և այն բոլոր գործուների հաշվառումը, որոնք կարող են ազդել այդ հատկությունների վրա, հետեւնք տիպական կավի երկրաբանական պատմության բոլոր փուլերին, սկսած նստվածքների կազմավորման ժամանակից մինչև ներկա ժամանակը, երբ այն հանդիպում է խորը հանքավայրերում և թումեներում՝ հողմնահարված կավի տեսքով կամ ոչ խորը բացվածքներում և բնական լանջերում՝ հողմնահարված կավի տեսքով:

## Զհողմնահարված կավի հատկուրյուններ

Այս աշխատության մեջ քննարկվում են հիմնականում կավճային կամ երրորդական ժամանակաշրջանների ծովալին կավերը, որոնք նստվածք են տվել միլիոնավոր տարիներ առաջ: Մածկող գրունտների կշռի աստիճանական մեծացման հետևանքով կավերը կոնսոլիդացվել են, մինչև որ վերջապես ձեռք է բերվել ամենամեծ կոնսոլիդացիոն ճնշումը: Հավանական է, որ ակտիվ կավալին միներալների համեմատաբար բարձր պարունակությամբ այդ պլաստիկ կավերը պահանջեցին զգալի ժամանակ, որպեսզի դրանց խոնավությունը հասներ հավասարակշռված լինի:

Հայտնի է, որ գրունտներ սեղման մի մասը ունի վերականգնվող բնույթ: Վերականգնվող մասը մեծանում է կավալին մասնիկների պարունակության հետ միասին, և ըննարկվող տեսակի պլաստիկ կավերում առաջացնում է ընդհանուր սեղման զգալի մասը: Նկ ՅՃ-ում ցույց են տրված տրորված պլաստիկ կավի կոմպրեսիոն փորձարկման արդյունքները: ԱՃ-1—կուսական կոմպրեսիոն կորն է, ԱՃ-2—խոնավության նվազեցումն է երկրորդական կոնսոլիդացիայի գեպրում և BC—վերականգնման կորն է զեֆորմացիայից հետո նույզի բեռնաթափման գեպքում: Էնդոնվում է, որ սեղման վերականգնման մասնիկների զեֆորմացիայի արդյունքը: Երբ բեռնվածքը հանվում է, մասնիկները ըստ էլության ձգուում են վերականգնել իրենց սկզբնական ձևը, եթե դրանք չեն զեֆորմացվել առաձգականության սահմանից վեր: Երբ կավը կոնսոլիդացվում է տվյալ բեռնվածքի տակ, այն պարունակում է զեֆորմացիայի վերականգնվող էներգիայի որոշ քանակ: Վերականգնվող էներգիայի քանակը կախված է կոնսոլիդացիոն ճնշումից և կավի հատկություններից: ընդհանրապես, որքան պլաստիկ է կավը, այնքան մեծ է նրա զեֆորմացիայի վերականգնվող էներգիան:

Վերադառնանք կավալին նստվածքին: Կոնսոլիդացիայից հետո կավը երկար ժամանակ թողնվել է առանց բեռնվածքի փոփոխման: Մածկող գրունտների մեծ կշռի, ժամանակի և որիշ ազդակների հետևանքով տեղի են ունեցել կավի ֆիզիկական և քիմիական փոփոխություններ: Այդ փոփոխություններն առաջացնում պրոցեսները միասին կոչվում են դիագնեզ: Կավի դիագնեզի բնույթի վերաբերյալ քիչ բան է հայտնի: Սակայն, ևնելով առաջացած էքսկաներից կարելի է ընդունել իրեն պոստովատ, որ մասնիկների միջև շփման գոտում լարումները շատ մեծ են և տեղի է ունենում վերաբերեցացում, առաջացնելով շփող մասնիկների ամեն մի զույգի ֆիզիկական հարմարեցվածություն: այսող ծագում են մոլեկուլար կապեր և կարող է զարգանալ աղջեղիա: Բացի դրանից, մասնիկների միջև կավը կազմակորվում է շփման գոտիներում ցեմենտացնող ագենտների նստվածք առաջացնելու հետևանքով: Ներկա աշխատանքում կոմքինացված էֆեկտը՝ անկախ նրա բնույթից, կոչվում է դիագնեստիկական կապեր կամ պարզապես կապեր:

Այսպիսով, բարձր ճնշման գեպքում, երկար ժամանակից հետո կավի կառուցվածքը դառնում է ավելի ու ավելի ամուր և բեկում՝ առանց ծավալի փոփոխության: Դիագնեստիկական կապերի ամրությունը կախված է կոնսոլիդացիոն ճնշումից, միներալային կազմից, ծակոտենային հեղուկից, շերմաստիճանից, ժամանակից և կարող է փոխվել մի կավից մյուսը: Այն գեպքում, երբ կապերը շատ ամուր են, կավը լինում է կոշտացած և դասակարգվում է որպես փափուկ ժայռապար:

Դիագնեստիկական կապերի էքսկաներից մեկն է կավի ծավալի հետագա փոփոխության հանդեպ դիմագրության մեծացումը բեռնվածքի մեծացման գեպքում: Լրացուցիչ բեռք առաջացնում է ծավալի շնչին փոփոխություն, երբ այն շի գերազանցում  $P_c$  (նկ. 3) որոշակի արժեքից:  $P_c$ -ի մեծությունը, որը սովորաբար կոչվում է նախակոնսոլիդացման ճնշում, որոշվում է առանց կապերի կավի ծավալի փոփոխության դիմագրության և կապերի կողմից առաջացած պահեստային դիմագրության գումարով: Դրա համար էլ

ամենամեծ նախապես գոյություն ունեցող կոնսոլիդացման ձևական որոշման հնարավորությունը, կոմպրեսիոն փորձարկումների միջոցով, սահմանափակված է այնպիսի կավերով, որոնք չեն հնթարկվել դիագնոստիկական գործությունը:

Հետագա երկրաբանական ժամանակաշրջանի ընթացքում, կավային նստվածքները բեռնաթափվել են որոշ ծածկող գրունտները էրոզիայից հեռացվելու հետևանքով: Եատ շրջաններում էրոզիայի մեծ ժաման տեղի է ունեցել մինչև պլեյստոցինը, այլ շրջաններում որոշ էրոզիա տեղի է ունեցել նաև սառցակալման ժամանակաշրջանում: Դեֆորմացիայի վերականգնվող էներգիայի առկայության հետևանքով կավը ձգուում է ընդարձակման և խոնավության մեծացման, բայց նրա ընդարձակմանը արգելակում են ժամանիկների միջև եղած կապերը: Առավել մեծ աստիճանի բեռնաթափիման դեպքում կապերը զառնուում են ավելի լարված և քայլքայլում են շատ ավելի մեծ քանակով: Այդ պատճառով էլ երկրի մակերսութիւն մոտենալով խոնավությունը աճում է:

Քանի որ գրունտների ստրոմկատուրայում կապերի քայլքայլումը կախված է ժամանակից, ապա ուղղան պրոցեսը կախված է ժամանակի երկրորդային էֆեկտից: Հավանական է, որ որոշ կավային թերթաբարերի հավասարակշռությամբ խոնավությունը դեռևս ձեռք չի բերվել: Այսպիսով, վերջնական խոնավությունը կախված է դեֆորմացիայի վերականգնվող էներգիայից, կապերի դիմացրությունից և դրանց քայլքայլումից: Դեֆորմացիայից հետո վերականգնման BD կորագիծը (նկ. 3a) ցույց է տալիս ուժեղ կապերով կավի բեռնաթափումից հետո հավասարակշռությամբ խոնավությունը, իսկ BC կորագիծը ցույց է տալիս նույնը, թույլ կամ առանց կապերի կավերի համար:

Նստվածքագոյացման ընթացքում ուղղածիդ էֆեկտիվ լարման մեծացումը առաջնուում է հորիզոնական էֆեկտիվ լարման մեծացում, որը կախված է սահմանական դիմացրելու կավի հատկությունից: Թույլ կավերի համար բերած հորիզոնական լարումը կլինի ավելի մեծ, քան ուժեղ կավերի համար: Նկ. 3b-ում AB կորագիծը ցույց է տալիս լարման փոփոխությունը բեռնավորման ժամանակ և համապատասխանում է նկ. 3a-ում կուսական կոմպրեսիոն կորագիծին: Բեռնաթափման ժամանակ կավը ընդարձակվում է, քանի որ ունի դեֆորմացիայի վերականգնվող էներգիա: Քանի որ կավը հնարավորություն ունի ուղղահայց, բայց ոչ հորիզոնական ուղղահայցը ազատ ընդարձակվելու, ապա ուղղածիդ էֆեկտիվ լարման փոփոխություններն եղի են ավելի մեծ, քան հորիզոնական էֆեկտիվ լարման փոփոխությունները: Այն ցույց է տրված նկ. 3b-ում BC' կորագծով, որը իրենից ներկայացնում է կապեր չունեցող կավի վարքը: Այնուամենայնիվ, եթե կավում զարգացել են դիագնոնական կապեր, ապա դրանք կարգելակեն կավի ընդարձակմանը և ծոված մասնիկներով ստեղծված կազմվածքը չի կարող առաջնուել մեծ հորիզոնական լարումները բեռնաթափման ժամանակ: Այսպիսով, մասնիկների միջև եղած կապերի շնորհիվ կավը իրեն պահում է որպես առածքական մարմին՝ պուտասույան բարձր գործակցով, և գումարային հորիզոնական լարումները լինուում են ավելի փոքր, քան լարումներն առանց կապերի կավերի համար. դա երևում է BD կորագիծից նկ. 3b-ում: Այդ պատճառով էլ բեռնաթափման դեպքում գերկոնսոլիդացված կավի վարքի վրա դիագնոնական կապերի աղղեցությունը կայանում է հորիզոնական լարումների գգալի փոքր, քան լարումներն առանց կապերի կավերի համար. դա երևում է BC' կորագծից նկ. 3b-ում: Այդ պատճառով էլ բեռնաթափման դեպքում գերկոնսոլիդացված կավի վարքի վրա դիագնոնական կապերի աղղեցությունը կայանում է հորիզոնական լարումների գգալի փոքր, քան լարումներն առանց կապերի կավերի համար:

Կավային նստվածքներում ամեն մի խորության վրա գոյություն ունի հնարավոր հորիզոնական լարումների վերին սահման: Հորիզոնական և ուղղածիդ էֆեկտիվ լարումների հայտնի տարրերության դեպքում կավում շոշափող լարումը կարեազանցի սահմանի դիմացրությունը և կարող է տեղի ունենալ բայքայում: Գերկոնսոլիդացված կավերի բեկոնսոլիդացված կավերի համար հորիզոնական լարումների պահի հարթությունը կայանում է հորիզոնական լարումները մինչև կավի կազմվածքում դեֆորմացիայի թաքնված էներգիայի մեծ քանակի պահպանման շնորհիվ:

կազմվածքի կոչտությունից, իսկ դա, նույնպես, կախված է կապերի դիմադրությունից: Ուժեղ կապերով կոշտ կավային թերթաքարերում հորիզոնական լարումների փոքրացման համար պահանջվում են սոսկ փոքր տեղաշարժեր, այն դեպքում, եթե թույլ կամ առանց կապերի կավերի համար հարկավոր են մեծ տեղաշարժեր:

### Հոգմեանացման ազդեցուրյունը

«Հոգմեանացման տերմինը այստեղ օգտագործվում է կավի վերին շերտերի բոլոր փոփոխությունների նկարագրման համար՝ ներառյալ ֆիզիկական փոփոխությունները, որոնք չեն առաջացել կիմիայական պայմանների պատճառով: Դիագենետիկ կապերով գերկոնսոլիդացված բաց կավերի հոգմեանացման պրոցեսում կարելի է զանազանել զեղինտեգրացիայի առաջին փուլը, որի ընթացքում կապերի քայլայման դեպքում կավի կազմվածքը խախտվում է, և երկրորդ փուլը, որի ընթացքում տեղի են ունենում քիմիական փոփոխություններ և միներալների տարրալուծում: Ուժեղ կապերով կավերում առաջին փուլը, ժամանակի երկրաբանական մասշտարով, տեղի է ունենում բավականին արագ, և իթե քննարկումը սահմանափառությունը կապերում առաջին փուլը, ժամանակի մեջ այդ փուլը ամենաէականն է:

Դեղինակերացիայի գլխավոր էֆեկտը կայանում է այն կապերի աստիճանաբար քայլայման մեջ, որոնք ձգտում էին պահպանել կավի սկզբնական կառուցվածքը: Ըստ կապերի քայլայման շափի, դրանց մեջ պարփակված դեֆորմացիայի վերականգնվող էներգիան ազատվում է և առաջացնում կավի ընդարձակում, իսոնավության մեծացում և սահման դիմադրության փոքրացում, Անդրածեղան է, որ այդ ընդարձակումը ուղղված լինի մակերևույթին ուղղահայաց: Քանի որ կավի ընդարձակումը մակերևույթին զուգահեռ ուղղությամբ անհնար է, դեֆորմացիայի էներգիայի աստիճանաբար առաջացնի այդ ուղղությամբ էֆեկտիվ լարումների մեծացում: Այդ մակերևույթին զուգահեռ լարումների մեծացումը տեղի կունենա նույնական արագությամբ, ինչպես քայլայմանը են կապերը և կշարունակվի այնքան ժամանակ, մինչև դեֆորմացիայի վերականգնվող ամրող էներգիան չափավի:

Դեղինակերացիայի ժամանակ տեղի ունեցող ընդարձակման ընդհանուր մեծությունը կախված է կավի դեֆորմացիայի թաքնված էներգիայի քանակից: Եթե կապերը շատ թույլ են, ապա դեֆորմացիայի էներգիայի մեծ մասը ցրվում է բնոնաթափման ժամանակ և այդ դեպքում զեղինտեգրացիայի էֆեկտը փոքր է լինում: Եթե կապերն ուժեղ են, ապա դեֆորմացիայի էներգիայի մի փոքր մասն է կորչում բնոնաթափման ժամանակ, դեղինակերացիայի գոտում ընդարձակումը լինում է շատ մեծ:

Դիագենետիկ կապերի քայլայման գլխավոր ազդակը դեֆորմացիան է: Դեֆորմացիան առաջանում է բազմաթիվ ֆիզիկական պրոցեսներից: Դրանց էֆեկտը փոքրանում է կախված խորությունից: Դիագենետիկ կապերով կավերում ընդհանրապես կարելի է տարրերել գոտիներ, որոնցում դեղինակերացիայի պրոցեսը զարդացել է տարրեր աստիճանով:

Մակերևույթից անմիջապես ներքեւ զտնվում է լրիվ դեղինակերացիայի գոտին: Այդ գոտին նենթարկվում է սառեցման, ջերմաստիճանային փոփոխությունների և կրկնվող չորացման ու խոնավացման: Այդ պրոցեսներին ուղեկցող դեֆորմացիաները էֆեկտիվ կերպով առաջացնում են կավի կառուցվածքի քայլայման: Այդ գոտում ինտենսիվ կերպով ընթանում են նաև քիմիական պրոցեսներ՝ կավի կավային միներալների օքսիդացում ու տարրալուծում: Խոնավությունը և սահման դիմադրությունը այդ գոտում առավել մեծ չափով կախված են կիմիայական պայմաններից, քան մայրական խոնավությունից և սահման դիմադրությունից:

Այդ գոտուց ներքեւ տեղավորված է զարգացած դեղինակերացիայի գոտին: Այդտեղ տեղի ունեցող դեֆորմացիաները կարող են առաջանալ էֆեկտիվ լարումների ցիկլային փոփոխությունից, որոնք առաջանում են

գետնաշրերի տատանումների և վերը գոյնված գրումտների սեղոնային սաղցակալման պատճառով ծակոտիկնային լարման ցիկլային փոփոխություններից Ռելիքֆի պայմաններից կախված, դեղինտեգրացիայի պրոցեսում կարենոր դեր կարող են խաղալ սահման դեֆերի դեֆորմացիաները: Այդ գոտին ընդհանրապես ունի բաց ճեղքերի սիստեմ: Օսմոտիկական ճնշումը, որը տեղի է ունենում ճեղքերում անուշահամ շրերի ցիրկուլյացիայի հետևանքով, կարող է բերել կավի թրջման: Որոշ բիմիական փոփոխություններ ընթանում են նաև այդ գոտում Այդ գոտին ընդհանրապես զգալիորեն փափուկ և խոնավ է, քան ներքեւ դասավորվածներինը:

Առավել ցածր է տեղավորված միջին դեղինտեգրացիայի գոտին: Այստեղ ենթամակերենության պայմանների աղղեցությունը չի զգացվում: Սակայն, դեֆորմացիաները և այն խորությունը, որում դրանք զարգանում են, զգալիորեն մեծ են լանջի, քան հորիզոնական մակերենութիւնը տակ տեղավորված լինելու դեպքում: Հենց այդ գոտում զարգանում է դեֆորմացիայի շատ կարենոր տեսակի: Այդ գոտու մանրամասն ուսումնասիրման դեպքում նկատվում է կետից կետ խոնավության զգալի փոփոխություն, քան ավելի ներքեւ տեղավորված անփոփոխ կամ անարատ կավում: Այդ փոփոխություններն արտացոլում են կավի միներալոգիական կազմը և ցույց են տալիս հոսունության սահմանի փոփոխությունը: Դեֆորմացիայի էներգիայի քանակը, որը կուտակված է բեռնվածության տակ գտնվող կավում, շատ մեծ շափով կախված է կավային միներալների տեսակից, և իրոք, որքան մեծ է ակտիվ կավային միներալների պարունակությունը, այնքան մեծ է դեֆորմացիայի վերականգնվող էներգիան: Այդ պատճառով էլ, միներալոգիական կազմի ամեն մի փոփոխություն տանում է անհավասարաշափ ուղղման և կարող ենթարկվում է տեղական անհավասարաշափ դեֆորմացիայի: Դա էլ իր հերթին բերում է հարեւան կավի ծավալի խախտման և կապերի հետագա քայլայման: Շատ հնարավոր է, որ այդ տեղական դեֆորմացիայում սահման և ճեղքվածքների գոյացում: Փոքր տարածականություն ունեցող ճեղքվածքների ինտենսիվ և ոչ կանոնավորված սիստեմը, որը բնորոշ է կավային թերթաքարերի դեղինտենգրացիոն գոտու համար, կարող է այդպիսով իր ծագմամբ պարտական լինել կապերի անհավասարաշափ քայլայմանը և դեֆորմացիայի թաքնված էներգիայի տեղաբաշխմանը:

Գերկոնսոլիդացված պլաստիկ կավի օրինակ կարող է ծառայել Յուլանդիայի Լիթլ-Թելթ էոցենյան հասակի կավը, որն ունի մոնտմորիլոնիտի մեծ պարունակություն: Նրա երկրաբանական պատմությունը ցույց է տրված նկ. 4-ում: Հողմնահարության աստիճանից կախված այն պահանում է դիագենետիկական կապերի այս կամ այն մասը: Նույնիսկ այնպիսի ուժեղ աղղեցություն, ինչպիսին է կավի նմուշի արորումը չի վերացնում այդ կապերը:

Պլաստիկ կավային թերթաքարերի օրինակ է ծառայում լավ ուսումնակարգած Հարավ-Սասկաչնանում Բերպոոյի վերին-կավճի կավային թերթաքարերը (Կանադա): Դրանք ունեն մոնտմորիլիոնիտի մեծ պարունակություն: Դրանց երկրաբանական պատմությունը ցույց է տրված նկ. 5-ում: Այն ուժեղ դիագենետիկ կապերով խիստ գերկոնսոլիդացված կավ է: Հողմնահարության տարրեր աղղակների աղղեցության տակ կապերի քայլայման շափից կախված դեֆորմացիայի էներգիան աղատվում է և տեղի է ունենում զգալի ուղղում: Նկ. 6-ում ցույց է տրված թերթաքարերում թունելի լայնության փոքրացումը ուղղելու հետևանքով: Փափուկ դեղինտենգրացված թերթաքարերի գոտում ուղղումը մեկ ու կես տարվա դիագենետիկումներում կազմել է 28-ից մինչև 53 ամ:

Գերկոնսոլիդացված պլաստիկ կավերի և կավային թերթաքարերի հատկությունների ամփոփում

Գերկոնսոլիդացված կավերի և կավային թերթաքարերի հատկություն-

ների մասին հետևողական պատկեր ստանալու համար անհրաժեշտ է երկու հասկացողություն՝ դեֆորմացիայի վերականգնվող էներգիան և դիագնոստիկան կապերը: Բնական պայմաններում կատարված դիտարկումներից կարելի է մոտավորապես դնահատել դրանց կարեռությունը: Հիմնվելով կարելի է մոտավորապես դնահատել դրանց կարեռությունը: Հիմնվելով քաշում տարրեր տեսակի գերկոնսուլիդացված կավերի և կավային թերթաքարի վարքի ուսումնասիրման վրա, նպատակահարմար է լեռնային պարաների այդ ընտանիքը ըստ դիագնոստիկական կապերի ամրության հատկանիշների ենթարաժանել երեք խմբի:

1. Գերկոնսուլիդացված կավեր՝ գերկոնսուլիդացված պլաստիկ կավեր թույլ կամ առանց կապերի:

2. Կավային թերթաքարեր՝ գերկոնսուլիդացված պլաստիկ կավեր լավ զարգացած դիագնոստիկական կապերով:

3. Թերթաքարեր՝ գերկոնսուլիդացված պլաստիկ կավեր ուժեղ զարգացած դիագնոստիկական կապերով:

4. Դիագնոստիկական կապերով:

Գերկոնսուլիդացված կավերում դեֆորմացիայի վերականգման էներգիայի մեծ մասը ցրվում է դեֆորմացիայից հետո վերականգնվող մահմանափակ լինելու հետևանքով բայց կողմանական գերկոնսուլիդացված կավերում է և հորիզոնական վերականգնվող էներգիայի մի մասը պահպանվում է և հորիզոնական վերականգնվող լարումները լինում են ավելի բարձր, քան այն նորմալ գերկոնսուլիդացված կավերում, որոնք գտնվում են ծածկող շերտերի նորոյն ճնշման տակու շողմնահարման ազդեցությունը սահմանափակվում է սոսկ մակերևույթին զուգահեռ կողմնային ճնշման մի փոքր ավելացմամբ: Հողմնահարությունը ուղեկցվում է սահմանափակված փոքրացումով՝ մասամբ խոնավության մնացած մասում, մասամբ էլ ճարճքման հետևանքներով:

Կավային թերթաքարերում կավի ուղղումը բեռնաթափման ժամանակ սահմանափակված է և բեռնաթափված կավի խոնավությունը փոքր է, քան գերկոնսուլիդացված կավինը: Կավային թերթաքարերում դեֆորմացիայի վերականգնվող էներգիայի մեծ մասը գեռ փակված է դիագնոստիկ կապերով: Հորիզոնական լարումները փոքր են թույլ կապերով կավերում, սահմանափակված կավին ուղղությունը դիմադրությունը բարձր է և կավին ուղղ ստրոկատրախին մեծ կարծրություն: Հողմնահարությունը առաջացնում է կապերի աստիճանական բայթքայտման գերազանցությամբ փակված կավինը փակված կապերի ավելացնումը է ուղղեցում, որը տանում է խոնավության մեծ ավելացման և սահմանափակված փոքրացման: Միաժամանակ մակերեսի վույթին զուգահեռ տեղի է ուղնենում լարումների զգալի մնացածում՝ կավի ընդարձակվելու հետևանքով:

Թերթաքարերում դիագնոստիկական կապերը այնքան ուժեղ են, որ գերկոնսուլիդացված կավը ձեռք է բերել թույլ ժայռապարի բնույթի: Բեռնաթափման ժամանակ ուղղեցում համարյա թե տեղի չի ունենում, և զրահետևանքով էլ թերթաքարերում պահպանվում է դեֆորմացիայի վերականգնվող էներգիան: Թերթաքարերում հորիզոնական լարումները փոքր են, իսկ սահմանափակված կավինը աստիճանական բայթքայտման մեջ: Հողմնահարությունը ազդեցությունը շատ մեծ: Հողմնահարությունը ազդեցությունը կայանում է կապերի աստիճանական բայթքայտման մեջ: Թերթաքարերը բաժանվում են բեկորների, որոնց շափերը փոքրանում են դեղինտերացիայի ընթացքում և այդ թերթաքարերը վերջում վերածվում են գերկոնսուլիդացված կավի: Այդ պրոցեսն ուղեկցվում է դեֆորմացիայի վերականգնվող էներգիայի աստիճանաբար ազդառությունը, որը տանում է կողմնային լարումների գործուն ծավալման և մնացած մասում: Գեղինտերացիայի շափեց կախված սահմանափակված զգալիորեն փոքրանում է:

Հետազոտություններում կապերի ամրության գերկոնսուլիդացված կավերը և կավային թերթաքարերը:

ԳԵՐԿՈՆՍՈԼԻՒՑՎԱՄ ԿԱՎԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՎԱՅԻՆ ԹԵՐԹԱՔԱՐԵՐՈՒՄ  
ԼԱՆՉԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Տարբեր տեսակի գերկոնսոլիդացված կավերի զգայունությունը առաջընթաց բայց այլաման վերաբերմամբ

Շարադրվածից երեսում է, որ տարբեր տեսակի գերկոնսոլիդացված կավեր առաջընթաց քայլայման դեպքում չունեն միևնույն գույքունությունը:

Որքան ավելի է գերկոնսոլիդացված կավը, այնքան մեծ է նրա դեֆորմացիայի գերականգնող էներգիայի պարունակությունը և առաջընթաց քայլայման վտանգը: Որքան զարդարված է լանջը և խորն է փլուզում առաջացնող հանվածքը, այնքան ավելի բարենպաստ են պայմանները առաջընթաց քայլայման համար: Գերկոնսոլիդացման միևնույն ստափանանի և միևնույն տոպոգրաֆիայի դեպքում լանջի վարքը որոշում են երեք հիմնական չափանիշներ՝ դիագնոնետիկական կապերի ամրությունը, կավի հողմնահարումը և նրա պլաստիկության աստիճանը:

Տարբեր տեսակի կավերի առաջընթաց քայլայման վտանգի համեմատական դասակարգման փորձը տրված է աղ. 2-ում, որի համար գնահատված են երեք էական հարաբերություններ:

Թույլ դիագնոնետիկ կապերով գերկոնսոլիդացված պլաստիկ կավերում առաջընթաց քայլայման վտանգը մեծ է: Այն վերաբերվում է ինչպես չողմնահարում այնպես էլ հողմնահարում կավերին:

Ուժեղ դիագնոնետիկ կապերով գերկոնսոլիդացված պլաստիկ կավերում դեֆորմացիայի վերականգնող էներգիան փակված է և այդ պատճառով էլ չողմնահարում կավերում առաջընթաց քայլայման վտանգը փոքր է: Եթե կապերը հողմնահարության տարբեր գործոնների ազդեցության տակ աստիճանարար քայլայվում են, դեփորմացիայի էներգիան ազատվում է, և եթե այդ տեղի է ունենում ծածկող շերտերի ցածր ճնշման դեպքում, ապա առաջընթաց քայլայման վտանգը շատ մեծ է:

Ցածր պլաստիկությամբ գերկոնսոլիդացված կավերի առաջընթաց քայլայման վտանգը շատ փոքր է: Ակտիվ կավային մասնիկների ցածր պարունակության պատճառով դեֆորմացիայի վերականգնող էներգիան և կողմնային լարումների նվազումն ուղեկցող դեֆորմացիաները շատ փոքր են: Բացի դրանից, ցածր պլաստիկությամբ կավերը բեկում չեն և դիմադրության որևէ զգալի փոքրացում՝ քայլայման սահմաններից դուրս դեֆորմացիայի ժամանակ չեն ցուցաբերում:

Զնողմնահարված կավերում լանջերի բայց այլաման մեխանիզմը

Գոյություն ունեն տարբեր ուղիներ, որոնցով կարող է սկսվել առաջընթաց քայլայվումը և դրա հետագա դարպացումը կարող է տարբեր լինել կախված այնպիսի գործոններից, ինչպիսիք են տեղագրությունը, երկրաբանական կառուցվածքը և կավի հատկությունները: Ստորև ուսումնասիրվում են երկու տարբեր դեպք, որոնք տիպական են չողմնահարում կավերը բեկում չեն և դիմադրության որևէ զգալի փոքրացում՝ քայլայման սահմաններից դուրս դեֆորմացիայի ժամանակ չեն ցուցաբերում:

Առաջին դեպքը ներկայացված է նկ. 7a-ում, որտեղ ցուցը է տրված հանվածքը՝ խոշորահատիկ ծածկությալին նյութում և չողմնահարում կապերով գերկոնսոլիդացված կավում: Առաջընթաց քայլայման դեպքում փլուզման անընդհատ մակերեսութիւնը զարգացումը տեղի է ունենում նկ. 2-ում նկարագրված սիեմայի համաձայն: Միակ տարբերությունը կայանում է նրանում, որ լանջի առկայության շնորհիվ (նկ. 7a) հորիզոնական լարումները կավում հանվածքի հեռավորությունից կախված մեծանում են: Հորիզոնական լարումների այդ մեծացումը հավանարար մեծացնում է առաջընթաց քայլայման վտանգը:

Ինչպես ցուցը է տրված նկ. 7a-ում առաջընթաց քայլայվումը տանում է սահմանան անընդհատ մակերեսութիւնը զարգացմանը, որը ձգտում է լինել հորիզոնական կամ հետեւել շերտավորությունից կախված մեծանում և սահեցման մակերեսութիւնը զարգանում է ինչ-որ երկարությամբ և սահեց-

ման մակերեռույթից վերև տեղավորված ամբողջ ըլոկի դիմադրությունը հորիզոնական տեղաշարժին այնքան է նվազում, որ չի կարողանում հակազգել գրունտի զանգվածից վերև գտնվող հողի ակտիվ ճնշմանը, առաջընթաց քայլայումը վերէ ածվում խողոք սողանքի (նկ. 7a):

Կախված այն բանից, թե ինչ է կատարվում սողանքային զանգված-ների հետև և ի՞նչ շափով են դրանք պահում ետևում գտնվող լուսը, առաջընթաց քայլայումը կարող է շարունակվել զարգանալ, առաջացնելով նոր խոշոր սողանքներ: Հոյժ գերկոնսոլիդացված պլաստիկ կավի խոր նստվածքների գորգածքներում առաջընթաց քայլայումը կարող է սկսվել նաև այն դեպքում, եթե վերին ավազային շերտի վրայով փորձածք է արվում չողմնահարված գերկոնսոլիդացված կավում (նկ. 7b): Մածկող շերտերի ճնշման փոքրացման հետևանքով հորիզոնական և ուղղաձիգ լարումների հարաբերությունը կավում՝ փորձածքի հատակից ներքեւ մեծանում է: Փորձածքի մի ինչոր խորությունում այդ հարաբերությունը կարող է գերազանցել այն կրիտիկական մեծությանը, որի դեպքում շոշափող լարումը գառնում է սահմանափակ պիկային արժեքին հավասար և տեղի է ունենում պասսիվ քայլայում սահմանափակ պիկային արժեքին մոտերքում է փորձածքի հատակի բարձրացում, որն ուղեկցվում է փորձածքի մոտերքում կավի հորիզոնական ուղղությամբ տեղաշարժումով: Այդ տեղաշարժումն առաջացնում է փորձածքի մոտերքի կավի հորիզոնական կողահոման փոքրացում, և ինչպես նկարագրված է վերը, կավում բերում է շոշափող լարումների տեղական կոնցենտրացիայի՝ լանջի տակ: Եթե այդ շոշափող լարումները գերազանցեն սահմանափակ պիկային մեծությանը, ապա տեղի կունենա առաջընթաց քայլայում և կառաջանա վիլուգման անընդհատ SS մակերեռությունը:

Հիշատակված երկու դեպքերում էլ սողանքներին բնորոշ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ լանջի շարժումը հիմնականում հորիզոնական ուղղությամբ է, կամ ուրիշ կերպ ասած, առաջընթաց քայլայումը ձգտում է զարգանալ այն մակերեռույթով, որը մեծ մասամբ ուղղված է հորիզոնական ուղղությամբ կամ հետևում է շերտավորման մակերեռությին:

Լանջերի քայլայման մեխանիզմը հոգմենահարված կալիերում

Գերկոնսոլիդացված կավի վերին բաց շերտի ուղաման մեխանիզմի վերը շարադրված կոնցենտրացիան թույլ է տալիս հասկանալու վիրազման բազմաթիվ դեպքեր, որոնք տեղի են ունենում երկրի մակերեռույթին թիւ թե շատ զուգահետո վիրազման մակերեռույթին բարեւ սողանքներն, ընդհանրապես, հեշտ են ձանեաշվում խորության հետ համեմատած դրանց մեծ երկարությամբ և սահեցման մակերեռույթի դիրքից այն գոտու ստորին մասում, որտեղ ուղի է ունենում հոգմնահարումը: Այդ տեսակի մի շարք սողանքների վերլուծումը ցույց է տալիս, որ սահեցման մակերեռույթով ձանրության ուժի ազդեցության տակ առաջացած միջին շոշափող լարումը, շատ ավելի փոքր է քան կավի սահմանափակությունը, բայց ունի նույն կարգի մեծություն, ինչ կավի սահմանափակությունը: Սողանքները պետք է հաջորդականութեն առաջանան սահեցման կազմավորված մակերեռույթի ուղղությամբ և քանի որ քայլայման այդ մակերեռույթը նախկինում գոյություն չի ունեցել, ապա կարելի է եղրակացնել, որ այն կազմավորվել է տեղի ունեցած սողանքին նախորդած առաջընթաց քայլայման ընթացքում: Քանի որ ձանրության ուժի տակ առաջացած շոշափող լարումները փոքր են սահմանափակությունից, ապա առաջընթաց քայլայումը կարելի է բացարձի հաշվի առնելով ներքին լարումները: Հենց այստեղ է երեան գալիս մակերեռույթին զուգահետո ուղղությամբ կավի ընդհանրակավելու ձգտումը: Ուստի հոգմնահարման գոտում կարող են զոյլություն ունենալ կողմնային լարումներ, որոնք բավականաշատ մեծ են կավի տեղական քայլայում առաջացնելու համար: Նույն երեւությունները հետագայում կրերեն մակերեռույթին դուզահետո, սահեցման անընդհատ մակերեսի զարգացմանը:

Առաջննթաց քայլայումը լրաւարանելու համար, դիտարկենք ուժեղ գիտակնետիկ կապերով գերկոնսոլիդացված պլաստիկ կավով մի լանջ: Դիցուր տեղի է ունեցել մի որոշ հողմնահարուս մինչև շխորությունը (նկ. 82), որի հետևանքով տեղի է ունեցել գեֆորմացման պարփակ էներգիայի ազատում և մակերեսովի լարումների հետագա մեծացում: Խոնավությունը այստեղ նույնպես մեծանում է, և սահքի դիմադրությունը ցածր է, քան նրա տակ գտնվող հողմնահարփած կավով:

Հանջի ստորոտում տեղի է ունենում էրոզիա (նկ. 83) և հողմնահարփած գոտում առաջանում է զարիթափ լանջ: Կողմնային հենարանի վերացման հետևանքով հողմնահարփած գոտում կողմնային լարումները արդեն պատր է փոխանցվեն ներքեւ գտնվող հողմնահարփած կավին շոշափող լարումներով ՏՏ հարթությունով: Այդ շոշափող լարումները ավելանում են ծանրության ուժից առաջացած շոշափող լարումներից, առաջացնելով շոշափող լարումների հարթեցներացիա՝ հենց լանջի ստորոտի տակ: Եթե շոշափող լարումները գերազանցում են կավի սահքի պիկային դիմադրությանը, ապա տեղի է ունենում տեղական սողվածք և սկսվում է առաջննթաց քայլայում:

Քանի որ սահքի պիկային դիմադրության մեջ կցման բաղադրիչը ունի զգալի մեծություն, ապա հողմնահարման գոտու սահմաններում կավի սահքի դիմադրությունը խորության հետ միասին մեծանում է աննշան շափով: Բայց ինչպես ծանրության ուժով, այնպես էլ ներքին կողմնային լարումներով առաջացած շոշափող լարումները մեծանում են խորությանը համեմատական: Դա բացատրում է, թե ինչու սահեցման մակերեսովի ձգտում է սկսվելու այնքան խորը, ինչպես որ հնարավոր է, և իրոք, բնության մեջ այդ մակերեսովի հաճախ գտնվում է հողմնահարման գոտու ամենացածր մասում:

Նկ. 8C-ում ցույց է տրված այն պատկերը, երբ մակերեսովի լարումներ է սահեցման մակերես և հասել P կետին: Սահեցման մակերեսի ուղղությամբ տեղի է ունենում սալի շարժում լանջիվար և սահքի դիմադրությունը սահեցման մակերեսովի նվազում է մինչև մնացորդային արժեքը: Հետագան կախված է լանջի թեքությունից: Եթե այդ թեքությունն այնքան փոքր է, որ ծանրության ուժի տակ առաջացած շոշափող լարումները սահեցման մակերեսովի փոքր կիրեն սահքի մնացորդային դիմադրությունից, ապա սահեցման մակերեսովի փոքր անջատված սալը չի շարժվելու լանջիվար և առաջննթաց քայլայումը չի վերածվի սողանքի: Եթե լանջը բավականին զարիթափ է, ապա շոշափող լարումը կերպանցի մնացորդային դիմադրությանը, և սալը կծառի շարժվել լանջիվար (նկ. 8C): PP' մակերեսով կողմնային լարումները կնվազեն, հնարավոր է կրառնան զրոյական: Եթե սահեցման մակերեսի առաջնային եղրում՝ շոշափող լարումները կավում, որոնք առաջանում են ծանրության ուժից և AA' մակերեսով զարգացող կողմնային լարումներից, գերազանցեն սահքի պիկային դիմադրությանը, ապա կշարունակվի սահեցման մակերեսովի լանջիվեր առաջընթաց քայլայումը:

### Առաջնբաց քայլայման զարգացման արագությունը

Առաջննթաց քայլայման ընթացքի արագության իմացությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ այդ գործոնը կառավարում է սոլանքների դանդաղեցումը: Ընդհանրապես այդ արագությունը կախված է այնպիսի գործոններից, ինչպիսին են լանջի թեքությունը, կողմնային ճնշման արժեքը և կավի պիկային դիմադրությունը: Հնարավոր է տարրերել պայմանների երեք կոմբինացիա:

1. Եթե կողմնային ներքին լարումներն այնքան բարձր են, որ տեղական շոշափող լարումներն ավելի մեծ են, քան կավի սահքի շցամաքեցված դիմադրությունը, ապա առաջընթաց քայլայումը զարգանում է շատ արագ:

2. Եթե կողմնային ներքին լարումներն այնքան ցածր են, որ տեղական շոշափող լարումներն ավելի փոքր են, քան սահքի շցամաքեցված դիմադրությունը, բայց ավելի մեծ են, քան սահքի ցամաքեցված դիմադրությունը,

ապա արագ քայլայում տեղի չի ունենում: Սակայն, մեծ լարումների տեղական գոտում կավը կձգտի դիլատացվել և խոնավությունը մեծանում է այնպիսի արագությամբ, ինչպիսի արագությամբ որ լցվում է չուրը: Ժամանակի ընթացքում տեղի է ունենում խոնավության մեծացում և սահմանափակության փորձացում շամաբեցված արժեքից մինչև ներքեւի ցամաքացածր: Այսպիսով, արագությունը, որով տեղի է ունենում առաջններաց քայլայումը, կառավարվում է ժամանակով, որը պահանջվում է սահմանաբեցված զիմերից մինչև գործող շոշափող լարման արժեքից մինչև գործող շոշափող լարման արժեքը իջեցնելով համար:

3. Եթե ծանրության ուժի և ներքին կողմնային լարումների ազդեցության տակ տեղական շոշափող լարումները փոքր են, քան սահմանաբեցված զիմադրությունը, ապա քայլայում տեղի չի ունենա ունիմիսկ այն ժամանակ, երբ խոնավությունը առաջընթաց քայլայման գոտում հավասարակշռության մեջ մտնի լարումների պայմանների հետ: Առաջններաց քայլայում տեղի կունենա միայն այն գեպում, երբ ժամանակի ընթացքում, կավի անընդհատ զեղինտեղացիայի և գեֆորմացիայի հետեւանքով պարփակ էներգիայի աղատումը կմեծացնի կողմնային լարումները: Սողանքի հապաղումը այդպիսի գեպքերում տեսում է մի քանի տարի կամ հարյուրամյակներ:

Քննության ենթարկելով սողանքների զարգացման ժամանակը, անհրաժեշտ է նմանապես հաշվի առնել գետնազրերի մակարդակի սեղունային փոփոխությունները, որոնք կարող են առաջացնել գրունտի սահմանաբեցման ապագա մակերեսույթի շփուղված մասում, այլ նաև սահմանաբեցման մակերեսույթի այն մասում, որն արդեն կազմավորվել էր: Առաջընթաց քայլայման վերջնական արդյունքը կայանում է նրանում, որ լանջի մակերեսույթի տակ տեղավորված կավի ծավալը անջատվում է և սահմանաբեցման ներքեւ սահմանի երկայնությամբ նվազում է մինչև մնացորդային արժեքը: Թե որքանով կծավալվի առաջընթաց քայլայումը մինչև որ լանջը սկսի սողալ, կախված է այնպիսի գործուներից, ինչպիսին են լանջի թեքությունը և եղրային պայմանները: Վերջապես, սողանքի ժամանակի վրա մեծ ազդեցություն են ունենում սահմանաբեցման մակերեսույթը, սահմանաբեցման գեպքը դարձնելու առաջնական պահանջաներից:

### ԼԱՆՁԵՐԻ ՍՈՂՔԸ ԳԵՐԿՈՆՍՈԼԻԴԱՑՎԱԾ ԿԱՎԵՐՈՒՄ

#### Սողի մեխանիզմը

«Լանչերի սողքը» մի ընդարձակ տերմին է, որն ինժեներական երկրաբանության մեջ օգտագործվում է աննկատելի արագությամբ լանջիվար ընթացող տեղափոխությունը նկարագրելու համար: Սահմանափակվելով կավային լանջերում սողքի բննարկումով, անհրաժեշտ է արբերել՝ ձմեռային սառեցման գոտում կատարվող սողիֆլուկտիզիան ներկա հողվածում բննարկված մեծ խորությունում տեղի ունեցող սողքից: Նույնիսկ առարկայի արդարի սահմանափակումով հնարավոր է, որ շոշափություն ունենա կավային լանջերում սողքի տարրեր տեսակների բազմազանություն: Գերիշնարիդացված կավի վերին շերտերում շարադրված կոնցենտրացիան, այնուամենայնիվ, թույլ է տալիս բացատրելու այդպիսի կավերում լանջերի տեղաշարժման գոնե մեկ տեսակը: Քանի որ սողքի բնույթի վերաբերյալ շատ քիչ բան է հայտնի, հետաքրքիր կիմնի սուլն հոգվածի մեջ մտցնել այդ տիպի սողքի և վերը նկարագրված առաջընթաց քայլայման միջև եղած կավի հակիրճ բննարկումը:

Կավերում տարրեր երկրաբանական ծագում և պատմություն ունեցող լանջերի վարքի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացություն անելու այն մասին, որ լանջերի սողքը ավելի որոշակի է գառնում մարդական կավի կամ լեռնային ապառի կոշտության, և կարծրության մեծացման գեպում: Սողքի նկատմամբ առավել հակված մարդերից մեկը գանվում է

Շվեյցարիայի արևմտյան մասում, որտեղ մայրական ապարները թույլ ցեմենտացված արգիլիտային թերթաքարեր են, ձեռք են բերել մեծ դիրագրություն բարձր հնջման ազդեցության տակ (դրանք կարող էին նաև ենթարկվել որոշ մեթամորֆային փոփոխությունների), բայց ուշում և բարավում են չըի և օդի հետ շփվելիս: Հաջորդն է սողքը, որ նկատվել է բիշ ավելի փափուկ կավային թերթաքարերից կազմված լանջերում՝ Հարավային ելլոպայում, Միացյալ Նահանգներում տարածված թերթաքարերի մի շարք շրջաններում, ինչպես, օրինակ, Պենսիլվանիայում և Կալիֆորնիայի արևմտյան ծովափում: Փորձից հայտնի է, որ Շվեյցարիայի, նորվեգիայի և Կանադայի լանջերում, որտեղ կավերը փափուկ են և նորմալ կամ համարյանորմալ կոնսոլիդացված, տեղի է ունենում շատ դանդաղ սողք, կամ այն ընդհանրապես բացակայում է: Նույնը վերաբերում է նաև լոսին: Այդ պատճառով էլ անհավատալի չէ, որ դիտարկվող սողքի բնույթը կապված է մայրական նյութի երկրաբանական պատմության հետ: Ենթադրվում է, որ սողքը ծավալի դանդաղ մեծացման հետ կապված երևույթ է և գեֆորմացիայից կուտակված էներգիայի մեծ քանակություն պարունակող հույժ գերկոնսոլիդացված կավերն ու թերթաքարերը ուղեկցվում են դեղինտեկտացիայով: Համաձայն սույն ենթադրության այդ տեսակ սողքի անհրաժեշտ պայմաններն են՝

1. Մայրական գրունտը կամ ապառը պարունակում է կավային մասնիկներ, դրանց բեռնվածության տակ հանդես են բերում պարզ արտահայտված առաձգական հատկություններ: Իսկ քիմիական և օրիներալոգիական փոփոխությունները, որոնք տեղի են ունենում, երբ կավը գտնվում է լրիվ բեռնվածության տակ, այնքան ուժեղ չէ, որպեսզի վերաբերեղացման կամ նույն պրոցեսների հետեւանքով խախտվեն կավային մասնիկների առաջական հատկությունները:

2. Կապեր, որոնք զարգացել են, երբ կավը գտնվում էր ամենամեծ կոնսոլիդացիոն ճնշման տակ, ունեն բավականաշատ դիմադրություն բեռնաթափման ժամանակ գեֆորմացիայի վերականգնվող էներգիայի էական մասի պահպանման համար. այդ կապերը բայցքայվում են, երբ կավը ենթարկվում է հողմանարման տարբեր փիզիկական և քիմիական ազդակների ներգործության:

3. Գեֆորմացիայի էներգիան, որն աղատվում է կավի ստրուկտորայի բայցքայման ժամանակ հողմանարման հետեւանքով, բավարար է կողմնային լարումների մեծացման համար մինչև այնպիսի մեծություն, որպեսզի ծանրության ուժի հետ զուգակցված դրանք կարողանան առաջացնել կավի զանգվածի առաջընթաց բայցքայվում:

Վերին կեղևում կավային թերթաքարերի դեղինտեկտացիայի ժամանակ կատարվող երևույթներն ասում են, որ սողքի առավել կարեսոր գործոնն է կողմնային ընդարձակման անընդհատ մեծացումը և միաժամանակ դիմադրության փոքրացումը, որն ուղեկցվում է խոնավության մեծացմամբ: Անխուսափելի է, որ ինչ-որ մի տեղ, լանջի պայմանները կլինեն նպաստավոր առաջընթաց բայցքայման սկսման համար, ինչպես օրինակ լանջի ստորոտը: Հենց որ սկսվում է շարժումը, դրանք զարգանում են լանջիվեր, որը նկարագրվել է նախորդ բաժնում:

Սողքի հետագա զարգացումը կախված է լանջի թերթությունից և բայցքայման գոտում կավի սահքի մնացորդային դիմադրությունից:

Եթե լանջը այնքան զարդարական է, որ մնացորդային դիմադրությունը փոքր է շոշափող ուժերից, սողքը վերջին հաշվով բերում է սողանքի, ինչպես նկարագրված է վերևում: Սողանքը մերկացնում է գրունտում թարմ մակերևույթը և պրոցեսը նորից սկսվում է:

Այն արագությունը որով լանջը կավային թերթաքարերում «հասցվում է», դրանով իսկ որոշվում է կավի վերին շերտերի դեղինտեկտացիայի արագությունը:

Եթե ծանրության ուժի ազդեցության տակ զարգացող շոշափողը լարում-

ները քայքայման գոտում հավասար են սահքի մնացորդային դիմադրությանը, լանջը ենթարկվում է դանդաղ կալունացված սողքի և շարժումը չի բերում սողանքի: Սողքի ընդհանուր մեխանիզմը կարող է բաժանվել երկու փուլի: Առաջին փուլում կազմակորպում է անընդհատ քայքայման դուինի վերը նկարագրված առաջնային գոտում ներքեւ պառկած կավից այդ ճանապարհով շերտ է անջատվում, սկսվում է սողքի շարժման կավից այդ ճանապարհով շերտ է անջատվում, սկսվում է սողքի շարժման կավից ամեն մի կողմնային ընդարձակումը հետագա դիզինտերացիայի ժամանակ առաջացնում է համապատասխան շարժում, և բանի որ լանջով ներքեւ սողանում դիմադրությունը լինում է աննշան, տեղի է ունենում սողքի լանջիվար:

Ինձարկե, շարժումը կլինի ոչ կանոնավորված և անհամասեն: Սողքին ուղեցվող ուժեղ ճաքճման հետևանքով ժակոտկինային ճնշումը քայքայման գոտում զգալիորեն տատանվում է տեղումների ժամանակ:

Այդ պատճենով էլ սողքը ունի սեղոնային բնույթ: Քանի որ շարժումները ները նպաստում են ավելի քիչ կախված կավի և անարատ կավի բեկորների զեղինտերացիային, ապա դա տանում է մնացորդային դիմադրության հետագա նվազեցման և սողքի տեղական արագացման:

Բավականաշափ փոքրաթեք լանջերում ծանրության ուժից առաջացած շոշափող ուժերը փոքր են, քան սահքի մնացորդային դիմադրությունը. այդ լանջերը չեն ենթարկվում գրավիտացիոն սողքի: Թուլացման կետերում կարող են տեղի ունենալ ներքին լարումներից առաջացող որոշ կողմնային շարժումներ, բայց դրանք չեն ազդի լանջի կայունության վրա: Ժամանակի ընթացքում վերին շերտը փափկում է և ներքին կողմնային լարումները նվազում են. գիշավոր լարումների հարաբերության ամենամեծ արժեքը փունկցիա է հանդիսանում կավի սահքի դիմադրությունից:

### Լանջերի սողքի դիտարկումները Կալիֆորնիայում, ԱՄՆ

Կավային լանջերի սողքի վերաբերյալ շատ քիչ հետազոտություններ են հրատարակվել: Դրանց են վերաբերում Կալիֆորնիայի արևմտյան ծովափի մի քանի լանջերի սողքի պատկերի բավականաշափ լրիվ նկարագրությունը, ներառյալ երկու լանջ՝ համեմատաբար ուժեղ կապերով երրորդական հասակի հույժ գերկունստիդացված ծովային կավերում: Լանջերն ունեն տարրեր թեքություններ, ուղղաբերձ դարափից մինչև փոքրաթեք լանջերը ( $9^{\circ}$ ): Հետազոտությունները ներգրավել էին նաև ծակոտկենային ճնշման և տարրեր խորություններում՝ ինկինումետրների միջոցով շարժումների շափումներ: Ուսումնասիրված լանջերից մեկը ուներ  $40^{\circ}$  մ բարձրություն, շատ փոքր թեքություն  $10^{\circ}$  անկյունով (նկ. 9): Լանջը ցուցաբերում է շատ թե քիչ անընդհատ սողունություն՝ շարժման միջին արագությունը տարրում մոտ 30 սմ է: Ինկինումետրական չափումների արդյունքներից (նկ. 9) կարելի է անել կարեռ եղրակացություն, որ սողքը առաջանում է վերին շերտի սողունությամբ՝  $14^{\circ}$  մ խորությունում տեղադրված լավ արտահայտված սահման մակերևութի կամ քայքայման նեղ գոտու երկայնությամբ: Գրավիտացիոն շոշափող լարումները սահմանային այդ մակերևութի երկայնությամբ մոտավորապես հավասար են կավի սահքի մնացորդային դիմադրությանը ( $\varphi \approx 10-12^{\circ}$ ): Թվում է, որ այդ լանջը տիպիկ օրինակ է, երբ անընդհատ սողքը առաջանում է զեղինտերացիայի հետևանքով կավի կողմնային ընդարձակումից. այդ մասնավոր դեպքում քիչ է հավանական, որ սողքը կրերի սողանքի: Հետազոտությունները ցույց տվին, որ նույն շրջանում լանջերը ունեն թեքություն  $9-10^{\circ}$  մինչև  $28^{\circ}$ : Ընդունելով  $C' = 0$  այդիպսի լանջերի կայունությունը պահանջում է, որ  $\varphi'$  կազմի  $12-15^{\circ}$  մինչև  $45^{\circ}$ : Շրջանի պատճությունը պարզորոշ ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում բոլոր լանջերը, որոնց թեքությունը գերազանցում է  $10-12^{\circ}$  փլազիլու են, բայց քայքայման ժամանակը կարող է լինել շատ մեծ: Աստիճանաբար սողանքի տանող տեղության ֆակտորը որոշակիորեն կապված է սողքի

Հետ: Այսպիսով, լանջերի կալոնությունը փոքրանում է կավի մակերևույթի մերկացման տևողությունից և այդ ժամանակամիջոցի ընթացքում սողքի ընդհանուր մեծությունից կախված: Դիտարկումները ցուց են տալիս, որ հենց այդ կավերի համար, որոնք ունեն 65—70% հոսունության սահման և պլաստիկության սահմանից զգալիորեն փեքը բնական խոնավություն, պահանջվում է զգալի գեֆորմացիա ստրուկտորայի քայլայման և կավին՝ «աճքի մնացորդային դիմադրության բերելու համար:

### Ա.Մ.Փ.Ո.Փ.ՈՒ.Մ

Ճապոնիայում, հույժ գերկոնսուլիդացված կավային թերթաքարերում աշավոր սողանքը նկարագրող հաշվետվության մեջ, այդ հարցով զրազվող ինժեներ-գրունտաբանը ստիպված էր եղանակացություն անելու, որ «սողանքային ստանան կարծես թե ծիծաղում է մարդկային անձեռնասության վրա»: Ցավոք սրտի, այս հոդվածը ուինչ շավեց այդ լավ հաստատված դրույթը փոխելու համար: Հոդվածի նպատակն էր պարզապես մի փորձ կատարել այդ սողանքային ստանային շրջապատելու և նրա բնույթին ուսումնասիրելու համար: Այդ փորձը, համենայն դեպքում, ցուց տվեց, որ եթե պետք է մեկ անունով անվանել առավել ամենաամուր կավերի քայլայմանը բերելու ուժեղ ազդակը, ապա այն հավանաբար կինի «գեֆորմացիայի վերականգնող էներգիան»: Այդ հարցի պարզաբանման համար քննարկվել են գերկոնսուլիդացված կավերի ինժեներական երկրաբանությունը և այն հասավոր ուղիները, որոնցով կավային լանջը սողանքի գեպքում հասնում է քայլայման, անկախ այն բանից, որ նա ունի զառիկող թերթյուն և կավի աշճքի մեծ դիմադրություն: Ներկա հետազոտության մեջ հիմնավորման այս մեթոդը կարող է հանրագումարի բերվել հետեւյալ կետերում:

1. Եղած բոլոր փաստերը առանց կասկածի հաստատում են, որ գերկոնսուլիդացված կավերում և կավային թերթաքարերում լանջերի քայլայմանը նախորդում է սահեցման անընդհատ մակերևույթի զարգացումը՝ առաջընթաց քայլայման մեխանիզմով, որում սահքի դիմադրությունը պրոդրեսիվորեն նվազում է պիկայինից մինչև մնացորդային արժեքը:

2. Որպես կամապես կարելի է ապացուցել, որ առաջընթաց քայլայման գեպքում սահեցման մակերևույթի զարգացումը պլաստիկ գերկոնսուլիդացված կավերում հանրագործ է, եթե բավարարվում են հետեւյալ երեք պայմանները: Առաջին, երբ ներքին կողմնային լարումները բավականաշափ մեծ են արումների կողնցինտրացիա առաջացնելու համար, առաջ շարժվող սահեցման մակերևույթով, որում շոշափող լարումները գերազանցում են սահքի պիկային դիմադրությունը: Երկրորդ, կավը պետք է պարունակի բավականին շահակությամբ գեֆորմացիայի վերականգնուղ էներգիա, որը սողքի ուղղությամբ անհրաժեշտ է ընդարձակման և քայլայման գոտում գեֆորմացիայի սուաչացման համար: Քանի որ կողմնային լարումների մեծությունը հիմնահանում կառավարվում է գեֆորմացիայի էներգիայով, ապա պարզվում է, որ լանջի սուաչընթաց քայլայման վտանգը հիմնականում կախված է մեկ որդոնից՝ գեֆորմացիայի վերականգնող էներգիայից, որը մինչև այժմ չէր ննարկվում կայունության սովորական գնահատումներում: Երրորդ, սահքի մնացորդային դիմադրությունը պետք է համեմատաբար փոքր լինի սահքի դիկային դիմադրությունից:

3. Այդ պատճառով էլ անհրաժեշտ է վերանայել գերկոնսուլիդացված ավերի ինժեներա-երկրաբանական հատկությունները՝ առավել ուշադրություն դարձնելով գեֆորմացիայի վերականգնուղ էներգիայի վրա: Այդ սումնասիրության ժամանակ պարզ դարձավ, որ որոշ կավերում գեֆորմացիայի էներգիան վերականգնվում է լարումների փոփոխության հետ միահամանակ, իսկ ուրիշ կավերում այն «փակված» է, և այդ պատճառով էլ մինիջապես առկա չէ: Այն բանի բացատրությունը, թե ինչու գեֆորմացիայի ներգիան կուտակված է որոշակի կավերում, կայանում է նրանում, որ այդ

կավերում դիագենետիկական կապերը գոյացել են այն ժամանակ, երբ կավը կրել է առավելացույն կոնսոլիդացման բնոնվածք: Մասնիկների շփման կետերի միջև եղած դիագենետիկական կապերը, զողվածության բնույթ են կետերի միջև եղած դիագենետիկական կապերը, զողվածության բնույթ են կետերի միջև եղած դիագենետիկական կապերը, աստիճանաբար քայլացում են, քանի որ մակերեսութիւնը բնույթը կավը ենթարկվում է հողմնահարքայի վայրի մասների մեջ առաջանաւ առաջանաւ առաջանաւ առաջանաւ:

4. Հետևաբար, թույլ և ուժեղ դիագենետիկական կապեր ունեցող գերկոնսոլիդացված կավերի վարքերի մեջ գոյությունը ունի չական տարրեցություն: Թույլ կավեր ունեցող կավերում դիֆորմացիայի էներգիայի մեծ մասը վերականգնվում է բնոնաթափման ժամանակի: Կավը ուղղում է համարյա անսահմանափակի ու հորիզոնական և ուղղաձիգ էֆեկտիվ լարումների անհարաժեշտույնը աճում է դիֆորմացիայից հետո վերականգնման ժամանակի: Կողմնային դիֆորմացիաների սահմանափակման հետևանքով կավը կունենա ընդարձակվելու ձգում հորիզոնական ուղղությամբ: Կավի վերելի վրա հողմնահարման ազդեցությունը կիխի ոչ մեծ: Ուժեղ դիագեներտերի վրա հողմնահարման ազդեցությունը կիավայի բերքաբարեւում դիֆորմացիայի վերականգնվող էներգիան փակված է բնոնաթափման ժամանակի: Այդ պատճառով էլ ուղղումը սահմանափակի է, հորիզոնական էֆեկտիվ լարումները համեմատարար փոքր սահմանափակի է, հորիզոնական ընդարձակման ձգումը սահմանափակի է: Սակայն, կավերն աստիճանաբար քայլացում են, եթե ուժեղ դիագենետիկական կապերով կավը ենթարկվում է հողմնահարման տարրեր ազդակների ազդեցության, և դրա հետևանքով տեղի է ունենում բավականին եռանդուն ուղղում, մակերեսութիւնը զուգահեռ ուղղությամբ էֆեկտիվ լարումների մեծացում և այդ ուղղությամբ ընդարձակվելու ձգում:

5. Այսպիսով, գերկոնսոլիդացված կավերի հատկությունների բննարկումից գալիս ենք այն եղակացության, որ առաջընթաց քայլացման նկատմամբ հասարակությունը նույնը չէ բոլոր գերկոնսոլիդացված կավերի համար, բայց խիստ կախված է այն ժամանակից, երբ աղատումը է դիֆորմացիայի պահեստված էներգիան: Առավել վտանգավոր պետք է լինեն ուժեղ կապերով կավային թերթաբարերը կամ գերկոնսոլիդացված կավերը, որոնք ենթարկվում են աստիճանաբար դեպինագրացիայի՝ մակերեսութիւնն մոտ հողմնահարման դեպում: Աղատվող դիֆորմացիայի պահեստված էներգիայի խոշոր մասը առաջանում է մեծ կողմնային լարումներ և պարզ արտահայտված ձգումը ընդարձակվելու մակերեսութիւնը զուգահեռ ուղղությամբ: Հետո գալիս են թույլ կապերով գերկոնսոլիդացված կավերը: Կավերի այդպիսի տեսակը համարյա թե հավասարապես վտանգավոր է հողմնահարված և հողմնահարված պայմաններում: Ամենաքիչ վտանգավոր կավերի տեսակին են պատկանում շողմնահարված գերկոնսոլիդացված կավային թերթաբարերը, որոնք ունեն այնպիսի ուժեղ դիագենետիկ կավեր, որ կարող են կանխել դիֆորմացիայի պահեստված էներգիայի աղատումը:

6. Ներկա հետազոտության վերջին քայլն էր ներկայացնում կոնցենցիայի հիմնավորման ստուգումը գերկոնսոլիդացված կավերում և կավային թերթաբարերում իրական սողանքների վրա: Հրատարակված նկարագրությունից և հաշվետվություններից հավաքել են տվյալներ, որոնք վերաբերում են մոտավորապես վաթսուն սողանքների, որոնց համար կավի տեսակը բավականաշափ լավ էր ուսումնասիրված: Ընդունելով, որ այդ դեպիեր կարող են ներկայացնել բնության մեջ գերկոնսոլիդացված կավերի իրական վարբագիծը, այս նյութը կարող էր օգտագործել 5-րդ կետում արված եղակացությունների համար: Սոլանքները աեղաբաշխված են ըստ կավերի

տեսակների և գտնված է, որ մեծ քանակությամբ սողանքներ (մոտ 55%) պեղի են ունեցել ուժեղ դիագենետիկ կապերով գերկոնսոլիդացված կավերի ողմանահարման գոտում: Սողանքների հաջորդ մեծ խումբը (մոտ 35%) ընկան է եկել թույլ կապերով գերկոնսոլիդացված կավերում, շատ դեպքերում նարավոր չեղել որոշել, թե սողանքները ինչպիսի կավերում են առաջացել՝ ողմանահարված թե չողմանահարված: Միայն փորբ քանակությամբ սողանքներ են առաջացել ուժեղ դիագենետիկ կապերով չողմանահարված կավերում (մոտ 10%), և դրանց մեծ մասը իրենցից ներկայացրել են բնական աղետներ, որոնցում ներգրավված են եղել շատ բարձր լանջեր: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ տարրեր տեսակի կավերում սողանքների հարաբերական հակվածության գնահատականը, որը բխում է ներկա կոնցեպցիալից, որակապես ճիշտ է: Վերջապես, ընտրվել են մի շարք սողանքներ, որոնց զարգացման մանրազննին դիտարկումները ապացուցեցին որ առաջընթաց քայլայման մեխանիզմը կարող է որակապես բացատրել սողանքների պատճառներն ու զարգացումը:

7. Հետազոտությունը շոշափել է նաև կավային լանջերի սողբի հարցը: Դիտումները ցույց տվին, որ սողբը կարող է նույնակա կապված լինել չողմանահարման գոտում գեֆորմացիայի պահեստված էներգիայի ազատման հետ՝ և հետևաբար, ուժեղ դիագենետիկ կապերով գերկոնսոլիդացված կավերում իրենից ներկայացնում է ընդհանուր երևույթ:

8. Վերջապես, որոշ հիմքեր կան ենթադրելու, որ գերկոնսոլիդացված կավերում և կավային թերթաքարերում լանջերի կայունության բարդ պրոբլեմը սերտորեն կապված է այդ կավերի ինժեներա-երկրաբանական առանձնահատուկ հատկությունների հետ, հատկապես, որ դրանք պարունակում են գեֆորմացիայի վերականգնվող էներգիան: Ժամանակի հապաղումը, որը դիտվում է որոշ կավերում, դրված է այն փաստով, որ գեֆորմացիայի այդ էներգիան փակված է դիագենետիկ կապերով, որոնք քայլայմում են միայն ժամանակ, երբ կավը ենթարկվում է հողմանահարման:

## PROGRESSIVE FAILURE OF SLOPES IN OVERCONSOLIDATED PLASTIC CLAYS AND CLAY SHALES<sup>1</sup>

Dr. Laurits Bjerrum

### Editor's note

The Third Terzaghi lecture given by the outstanding Norwegian scientist Dr. Laurits Bjerrum (1918–1973) who has passed away prematurely is of exceptional interest for the understanding of the landslide mechanism in the overconsolidated clays. The propounded concept on the liberation of the recoverable strain energy stored during the consolidation process and on the role of diagenetic bonds in this process opens great prospects at the study of the landslide mechanism in areas with a complicated geological history.

Dr. Laurits Bjerrum's scientific potential and the creative activity where truly unusual. It is enough to tell that in 1966–1967 only he delivered three outstanding lectures at the most important forums on soil

<sup>1</sup> The Third Terzaghi lecture given to the Structural Engineering Conference of the American Society of Civil Engineers in Miami, Florida on February 1, 1966 and published in Journal of the Soil Mechanics and Foundation Division ASCE, vol. 93, SM5, 1967, p. 1–49; see also Norwegian Geotechnical Institute, Publication Nr. 77, Oslo, 1968, p. 1–29.

mechanics: the Seventh Rankine lecture „Engineering geology of Norwegian normally-consolidated marine clays as related to settlement of buildings“ held before the British Geotechnical Society in London; the Special lecture „Effect of structure on the shear behaviour of normally consolidated quick clays“<sup>2</sup> delivered at the Geotechnical Conference on Shear Strength Properties of Natural Soils and Rocks in Oslo; and the present Third Terzaghi lecture. His swan song was the remarkable General Report „Problems of soil mechanics and construction on soft clays“ presented to the Eighth International Conference of Soil Mechanics and Foundation Engineering held in Moscow in 1973 which he could not read unfortunately.

Dr. Bjerrum combined this immense scientific work with the leadership of the greatest Norwegian Geotechnical Institute the Director of which he has been from the moment of its organization until his death, with the creation of the Terzaghi's library and the guidance of the International Society on Soil Mechanics and Foundation Engineering (Vice-President for Europe in 1961—1965 and President in 1965—1969).

In the present abridged translation of the Third Terzaghi lecture many examples of landslides, quoted by the author from the publications and numerous references were omitted. The Editorial Board offers its apologies for these excisions forced by the place requirements.

*George Ter-Stepanian*

---

<sup>2</sup> Translation of this lecture into Armenian and Russian was published in Transactions „Problems of Geomechanics“ No 4, 1970.